

**Հավելված**  
Հաստատված է  
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի  
2018թ. հուլիսի 20-ի թիվ 115 Ա որոշմամբ

## **Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

### **Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի Ֆ Ի Ն Ա Ն Ս Ա Կ Ա Ն Դ Ի Տ Ա Ր Կ ՈՒ Մ Ն Ե Ր Ի Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ի**

#### **ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) ֆինանսական դիտարկումների կենտրոնը (այսուհետ՝ ՖԴԿ) հանդիսանում է ՀՀ ֆինանսական հետախուզության մարմինը:

2. ՖԴԿ-ն իրականացնում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) իրեն վերապահված գործառույթները և լիազորությունները:

3. ՖԴԿ-ն հանդիսանում է Կենտրոնական բանկի պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանում, որը գործում է Օրենքի, Կենտրոնական բանկի խորհրդի որոշումների, Կենտրոնական բանկի նախագահի որոշումների, կարգադրությունների և սույն կանոնադրության հիման վրա:

4. ՖԴԿ-ն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված ռազմավարությամբ և աշխատանքային ծրագրով:

#### **ԳԼՈՒԽ 2. ՖԴԿ-Ի ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

5. ՖԴԿ-ի նպատակն է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի արդյունավետ կանխարգելիչ միջոցառումների ներդրումը, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի (այսուհետ՝ ՁՈՁ) տարածման հետ կապված անձանց գույքի սառեցման ապահովումը:

6. ՖԴԿ-ի խնդիրներն են՝

1) ՓԼ/ԱՖ կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերլուծությունը՝ հիմք ընդունելով հաշվետվություն տրամադրող անձանցից, պետական մարմիններից ու կազմակերպություններից ստացված տեղեկությունները, վերլուծության արդյունքում ՓԼ/ԱՖ հիմնավոր կասկածների վերաբերյալ քրեական հետապնդում իրականացնող մարմիններին ծանուցումներ տրամադրելը,

2) հանրային իրազեկում իրականացնելը, այդ թվում՝ հաշվետվություն տրամադրող անձանց և իրավասու պետական մարմինների մոտ ՓԼ/ԱՖ կանխարգելման հետ կապված գիտելիքները խորացնելը և ՓԼ/ԱՖ դեպքերի բացահայտման կարողություններ ձևավորելը,

3) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ներգրավված միջազգային կառույցներում ՀՀ-ն ներկայացնելը, այդ թվում՝ օտարերկրյա գործընկերների հետ արդյունավետ համագործակցությունը,

4) ՓԼ/ԱՖ ռիսկերի բացահայտման և զսպման նպատակով ռազմավարական վերլուծություն կատարելը, այդ թվում՝ ազգային ռիսկերի գնահատումներ իրականացնելը:

7. ՖԴԿ-ն ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նպատակով իրականացնում է Օրենքով սահմանված հետևյալ գործառույթները և լիազորությունները՝

1) հաշվետվություն տրամադրող անձանցից և պետական մարմիններից հաշվետվություններ ստանալը, ինչպես նաև այլ տեղեկություններ ստանալը և մշակելը, որը ներառում է՝

ա. հաշվետվություն տրամադրող անձանցից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ հաշվետվություններ ստանալը,

բ. պետական մարմիններից այլ տեղեկություններ, այդ թվում՝ Օրենքով սահմանված վիճակագրական տվյալներ ստանալը, հավաքագրելը և վիճակագրություն վարելը,

2) ստացված հաշվետվությունների և այլ տեղեկությունների գործառնական վերլուծություն իրականացնելը, որը ներառում է՝

ա. կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների, ինչպես նաև մոնիտորինգի ցանկերին, հաշվետվություն տրամադրող անձանց տրամադրված հանձնարարականներին համընկնող պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ հաշվետվությունների հիման վրա վերլուծություն իրականացնելը,

բ. քրեական հետապնդման, իրավասու այլ մարմիններից կամ այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հիման վրա վերլուծություն իրականացնելը,

գ. հաշվետվություն տրամադրող անձանցից, պետական, այդ թվում՝ վերահսկող և քրեական հետապնդման մարմիններից, սույն կետի «ա» և «բ» ենթակետերում նշված վերլուծությունների իրականացման համար անհրաժեշտ լրացուցիչ տեղեկություններ, այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկություններ պահանջելը,

դ. ստացված հաշվետվությունների վերաբերյալ հաշվետվություն տրամադրող անձանց պարբերաբար հետադարձ տեղեկություն տրամադրելը,

3) քրեական հետապնդում իրականացնող մարմիններին ծանուցում տրամադրելը,

4) Օրենքով սահմանված իրավական ակտեր մշակելը, այդ թվում՝ իրավական ակտերի կիրառության ընթացակարգերը պարզաբանող ուղեցույցեր, դրանց հետ կապված պարզաբանումներ մշակելը և ներկայացնելը,

5) կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու կամ ահաբեկչության կամ ՋՈՁ տարածման հետ կապված անձանց և կազմակերպությունների գույքը սառեցնելու մասին Կենտրոնական բանկի խորհրդին առաջարկություն ներկայացնելը,

6) հաշվետվություն տրամադրող անձանց հանձնարարականներ տալը, այդ թվում՝

ա. գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժելու կամ դադարեցնելու հանձնարարականներ,

բ. հաճախորդի հավելյալ պատշաճ ուսումնասիրություն իրականացնելու հանձնարարականներ,

գ. չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում գտնվող կամ բնակվող կամ այդպիսի երկրներից կամ տարածքներից անձանց նկատմամբ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականներ,

7) միջազգային կառույցների և արտասահմանյան երկրների հրապարակած տվյալների հիման վրա Օրենքով սահմանված կարգով չհամապատասխանող երկրների կամ տարածքների ցանկեր հրապարակելը,

8) հաշվետվություն տրամադրող անձանց ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կարողությունների զարգացման նպատակով ուսուցում իրականացնելը և, ըստ անհրաժեշտության, այլ մարմինների կողմից իրականացվող ուսուցմանն օժանդակելը,

9) հաշվետվություն տրամադրող անձանց վերահսկող (լիցենզավորող, նշանակող, որակավորող, կամ այլ կերպ գործունեության թույլտվություն տրամադրող) մարմինների հետ համագործակցելը, որը ներառում է՝

ա. հաշվետվություն տրամադրող անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու միջնորդություն ներկայացնելը,

բ. հաշվետվություն տրամադրող անձանց նկատմամբ իրականացվող վերահսկողությանը օժանդակելը, այդ թվում՝ ստուգումների մասնակցելու եղանակով,

10) իրավասու պետական մարմինների հետ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հարցերով համագործակցելը, այդ թվում՝ Օրենքի նպատակներից բխող տեղեկություններ փոխանակելը, համագործակցության համաձայնագրեր կնքելը,

11) օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմինների հետ համագործակցելը, այդ թվում՝ Օրենքի նպատակներից բխող տեղեկություններ փոխանակելը, համագործակցության համաձայնագրեր կնքելը,

12) միջազգային իրավասու կառույցների հետ համագործակցելը, միջազգային կառույցներում ՀՀ շահերը ներկայացնելը, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում միջազգային նախաձեռնությունների վերաբերյալ հանրային իրազեկում իրականացնելը,

13) ՖԴԿ-ի գործունեության վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդին տարեկան հաշվետվություններ ներկայացնելը և հրապարակելը,

14) ՓԼ/ԱՖ ռիսկերի բացահայտմանը և գնահատմանն ուղղված ռազմավարական վերլուծություն իրականացնելը, որը ներառում է՝

ա. ազգային ռիսկերի գնահատման աշխատանքներ կազմակերպելը և կանոնակարգելը,

բ. ՓԼ/ԱՖ սխեմաների վերաբերյալ տիպաբանությունների մշակելը և հրապարակելը,

15) ՓԼ/ԱՖ և ՁՈՁ տարածման ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով գործող միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքները կազմակերպելը (քարտուղարության ապահովումը), որը ներառում է,

ա. միջգերատեսչական հանձնաժողովի նիստերի օրակարգը կազմելը, շրջանառելը, համաձայնեցնելը անդամ գերատեսչությունների հետ,

բ. միջգերատեսչական հանձնաժողովի նիստերին ներկայացվող հարցերի վերաբերյալ տեղեկանքներ կազմելը և շրջանառելը,

16) Օրենքով սահմանված այլ լիազորություններ և գործառույթներ իրականացնելը:

8. Սույն կանոնադրության 7-րդ կետով սահմանված գործառույթները և լիազորությունները ՖԴԿ-ն իրականացնում է Օրենքով, իր ներքին ընթացակարգերի վերաբերյալ ձեռնարկով, Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված այլ ակտերով, ՖԴԿ-ի ղեկավարի կարգադրություններով ու հանձնարարականներով սահմանված կարգով:

### **ԳԼՈՒԽ 3. ՖԴԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

9. ՖԴԿ-ն իր գործառույթներն ու լիազորություններն իրականացնելիս անկախ է Կենտրոնական բանկի որևէ կառուցվածքային ստորաբաժանումից կամ որևէ այլ մարմնից: ՖԴԿ-ի գործառութային անկախությունն ապահովվում է Կենտրոնական բանկում ՖԴԿ-ի հատուկ կարգավիճակով:

10. ՖԴԿ-ն Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործառույթներն ու լիազորությունները իրականացնում է ինքնուրույնաբար՝ ըստ անհրաժեշտության համագործակցելով Կենտրոնական բանկի ստորաբաժանումների կամ այլ իրավասու պետական մարմինների հետ՝ կնքված փոխըմբռնման համաձայնագրերի կամ գործարար սովորույթի համաձայն:

11. ՖԴԿ-ը պետք է ապահովի Օրենքով սահմանված՝ ստացվող, վերլուծվող և տրամադրվող տեղեկությունների համար անվտանգ պահպանության անհրաժեշտ պայմաններ: Այդ տեղեկությունները կարող են հասանելի լինել միայն օրենքով սահմանված կարգով իրավասու մարմինների կամ անձանց համար:

12. ՖԴԿ-ի այն աշխատակիցները, որոնց հասանելի են ստացվող, վերլուծվող և տրամադրվող տեղեկությունները, Օրենքով և Կենտրոնական բանկի իրավական ակտերով սահմանված կարգով պահպանում են գաղտնիք հանդիսացող տեղեկություններն իրենց պարտականությունների կատարման ընթացքում և դրանց դադարումից հետո, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում դրա անօրինական հրապարակման համար: Այդպիսի տեղեկությունները կարող են օգտագործվել միայն Օրենքի նպատակներով:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսդրության համաձայն՝ ՖԴԿ-ի աշխատակիցները չեն կարող իբրև վկա հարցաքննվել, ցուցմունք տալ դատարանում ՖԴԿ-ի կողմից ստացվող, վերլուծվող կամ քրեական հետապնդման/վերահսկող մարմիններին տրամադրվող տեղեկությունների առնչությամբ Օրենքով սահմանված կարգով իրենց կողմից ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:

14. ՖԴԿ-ի աշխատակիցները պարտավոր են պահպանել Կենտրոնական բանկի կողմից սահմանված վարքագծի կանոնները:

15. ՖԴԿ-ի գործունեության հրապարակայնությունը ապահովվում է սույն կանոնադրության 7-րդ կետի 14-րդ ենթակետով նախատեսված տարեկան հաշվետվությունների հրապարակման միջոցով, որոնք ներառում են առնվազն հետևյալը՝

1) հաշվետու տարում ՖԴԿ-ին տրամադրված հաշվետվությունները և այլ տեղեկությունները,

2) ՓԼ/ԱՖ ռիսկերի բացահայտմանն ուղղված ռազմավարական

վերլուծությունները և բացահայտված ռիսկերի զսպման ուղղությամբ ձեռնարկված կանխարգելիչ միջոցառումները, հաշվետվություն տրամադրող անձանց տրված հանձնարարականները,

3) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտի ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային գործընկերների հետ համագործակցությունը, մասնավորապես՝ կատարված աշխատանքները, իրականացված միջոցառումները, միջազգային կառույցների կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ՀՀ-ին տրված գնահատականները,

4) ՖԴԿ տվյալների շտեմարանի, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտի առցանց ուսուցման համակարգի, տեղեկատվության փոխանակման համակարգերի զարգացման վերաբերյալ տեղեկությունները:

#### **ԳԼՈՒԽ 4. ՖԴԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

16. ՖԴԿ-ի միջոցները ձևավորվում են Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ՖԴԿ-ի ամենամյա բյուջեի հաստատման միջոցով: Կենտրոնական բանկի կողմից ՖԴԿ-ին ամրակցված գույքը գտնվում է նրա անմիջական տիրապետման և օգտագործման ներքո:

17. ՖԴԿ-ն առանձին աշխատանքային կարիքները և խնդիրները հոգալու համար իրավասու է ընդունել միջազգային դոնոր կազմակերպությունների տեխնիկական օժանդակություն, այդ թվում՝ ֆինանսական միջոցներ և այլ գույք:

#### **ԳԼՈՒԽ 5. ՖԴԿ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

18. ՖԴԿ-ը կառուցվածքը ներառում է ՖԴԿ-ի ղեկավարին, ղեկավարի տեղակալին, իրավական ապահովման բաժինը, վերլուծությունների բաժինը, միջազգային հարաբերությունների բաժինը, տեղեկատվական համակարգերի մշակման և զարգացման բաժինը (ՖԴԿ աշխատակիցներ):

19. ՖԴԿ-ի ղեկավարը և աշխատակիցները նշանակվում են Կենտրոնական բանկի խորհրդի կողմից:

20. ՖԴԿ-ի աշխատակիցների գործառույթներն ու պարտականությունները սահմանվում են նրանց աշխատատեղերի նկարագրով:

21. ՖԴԿ-ի ղեկավարը՝

1) համակարգում է ՖԴԿ-ի գործառույթների և լիազորությունների իրականացման աշխատանքները,

2) ղեկավարում և վերահսկում է ՖԴԿ-ի աշխատակիցների կողմից աշխատանքային գործառույթների և պարտականությունների կատարումը,

3) ներկայացնում է ՖԴԿ-ն ՀՀ իրավասու մարմինների, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային կառույցների և օտարերկրյա ֆինանսական հետախուզության

մարմինների հետ հարաբերություններում, այդ նպատակով, ըստ անհրաժեշտության, կնքում է համաձայնագրեր,

4) կազմակերպում կամ մասնակցում է ՖԴԿ-ի խնդիրներին վերաբերող խորհրդակցություններին, նիստերին, քննարկումներին,

5) մասնակցում է Կենտրոնական բանկի խորհրդի և մշտապես գործող հանձնաժողովների նիստերին,

6) Կենտրոնական բանկի խորհրդի կամ նախագահի քննարկմանն է ներկայացնում ՖԴԿ-ի աշխատակիցների ընդունման և ազատման, նրանց կարգապահական խրախուսման և տույժի ենթարկելու վերաբերյալ առաջարկությունները,

7) որոշում է ՖԴԿ-ի աշխատակիցների գործուղման, ուսուցման և վերապատրաստման հարցերը,

8) ի պաշտոնե հանդիսանում է ՓԼ/ԱՖ և ՁՈՁ տարածման ֆինանսավորման դեմ պայքարի նպատակով գործող միջգերատեսչական հանձնաժողովի քարտուղար,

9) իրականացնում է ՖԴԿ-ի աշխատանքների կազմակերպմանն ուղղված այլ գործառույթներ:

22. ՖԴԿ-ի ղեկավարը պատասխանատու է ՖԴԿ-ի աշխատակիցների աշխատանքային կարգապահության, աշխատանքային պարտականությունների ժամանակին և պատշաճ որակով կատարման համար:

23. ՖԴԿ-ի ղեկավարի տեղակալը՝

1) համակարգում է ՖԴԿ-ի գործառույթների և լիազորությունների ընթացիկ իրականացումը,

2) իրականացնում է ՖԴԿ-ի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարությունները, կարգադրությունները և ցուցումները,

3) ՖԴԿ-ի ղեկավարի բացակայության դեպքում, ինչպես նաև նրա հանձնարարության հիման վրա կատարում է ՖԴԿ-ի ղեկավարի համար սահմանված գործառույթները:

24. Սույն կանոնադրության 7-րդ կետով սահմանված գործառույթներն ու լիազորություններն իրականացվում են ՖԴԿ-ի բաժինների կողմից:

25. ՖԴԿ-ի ընթացիկ գործունեության սպասարկումը (փաստաթղթաշրջանառություն, հաշվապահություն, գնումների իրականացում, գործուղումների կազմակերպում և այլն) իրականացնում են Կենտրոնական բանկի համապատասխան ստորաբաժանումները՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով: